1561 Հայոց Թվ. Ռժորդի, նոյեմբեր ամսեանն ժԳորդի: Փառք Աստուծոյ Հօր անմահի, և Որդւոյն Աստուծոյ Միածնի, և Ս. Հոգւոյն ճշմարտի, այժմ և յաւէտ յաւիտեանս. ամէն: Որ ետ մեզ կարողութիւն համբերութեան իւր ամենազօր մարդասիրութեամբն. և հասոյց զմեզ յայսմ ժամուս, զոր տեսաք զհալածումն և աւարումն նեղչաց և հալածչաց մերոց. որպէս և գրեալ կայ ի գրին այսմ առաջագոյն, եթէ որչափ փորձանս և հալածումս յարուցին ի վերայ ողորմելի և անտիրացեալ ազգիս մերոյ, այդ խուժադուժ երկրին իշխանն, որ կոչի Օլախաց, ամբարիշտ և պիղծ պարոն Ալեքշանտր, որ էր որդին կորստեանն և մարդն անօրէնութեան, ժառանգ դժոխոց և Նեռան կարապետն, հպարտացեալ ի վերայ փառաց իւրոց, իբրև զսատանայ. համարձակեցաւ ետ պիղծ և լիրբ անզգամութեամբ զայսչափ ան-

Ի լուսանալ չորեքշաբթին՝
Պարոնն եկաւ ի Վեստեւին,
Եւ զինչ Օլախ կայր Սեչովին
Ժողովեցան ի միասին.
Ա՛յլ չար հրաման տըւաւ կրկին,
Զինչ որ գըրեանք կայր Վեստեւին՝
Զարծաթապատ աւետարնին
Զանգին գըրեանք Հայոց ազգին,
Հանին ի դուռն ի Վեստեւին
Եւ փայտի պէս կըտորտեցին.
Այն անօրէն պիղծ Օլախնին
Զամէն գըրեանքըն այրեցին:
Շտեֆան Պարոնն ի Վեստեւն էր,
Ի բարձր տեղիք նստել էր.
ԶՀայոց օրէնքըն բամբասէր,
Վերուստ հայէր և ծիծաղէր:
Սեչով քաղքի զեկեղեցին
Եւ ըզվանքերն Հայոց ազգին՝
Զորն այրեցին և աւերեցին,
Մինչև ի հիմըն հասուցին.
Զամէն զանկակն և պատկերքնին
Տարան իւրեանց եկեղեցին,
Ասեն. Արժան չէ այս Հային,
Դոքա վայել են մեր ազգին.
Ցետոյ հրաման եկաւ կրկին,
Ասաց, Բերէք զՀայ երիցնին,
ԶՎոյթ տանուտէրքն և Պըրկարնին [1]
Զկանայք և աղջկունքն ի միասին.

Բազում աւմաչէր սփռեցան
Քաղքին տըներն և մօրեստան,
ԶՀայոց ազգն զօրս որ գըտան,
Թէ քահանայ թէ աշխարհական,
Զոմանք փոսէն ի դուրս հանին,
Շատք ի մօրին գըտան բերին,
Կանայք բազում և աղջըկնին,
Նորահարսներ ու երեցակին.
Զոմանց ըզձեռըն կապեցին,
Եւ շատք մազէն ի քարշ բերին.
Բերին ի դուռըն Վեստեւին,
Անտանելի չարչարեցին:
Այն վոյվոտայն պեղծ Շտեֆան
Որ ինքն եղաւ դիւաց դարան,
Ասաց. Հայե՛ր դուք միաբան,
Ունկըն [2] գըրէք ամենեքեան.
Այդ ի՞նչ հաւատք որ կու պաշտէք,
Ամէն ազգէ դուք ի դուրս էք,
Որ դուք ամէնքըդ մոլար էք,
Եկէք ի մեր հաւատն մտէք [3]:
Ասցին Հայերըն միաբան.
Լըսէ Պարոն մեր Շտեֆան,
Մենք քրիստոնեայ եմք միաբան [4]
Եւ մկըրտած ի յաւազան:
Պեղծ վոյվոտան Օլախ ազգի
Պատասխանեաց Հայոց դասի [5]
Եկէք մտէք հաւատ Հռոմի,
Շատ մեծութիւն տամ ես ձեզի:

1. իշխանաւոր կամ հոգացող, ինչպէս Procureur.
2. Այլ Օ. Ականջ:
3. Եկէք ամենքդ Օլախ եղէք
ի մեր հաւատըն մկըրտեցէք:
4. Քրիստոնեայ եմք ամենեքեան:
5. Ազգի: